

ղութեան առնելով զբուսածք մը անոր երկտասարդութեան տարիներէն եւ թղթակցութիւնները, որոնց մեծ թուէն հասած են մեր ձեռքը քանի մը նմոյշներ միայն :

1. Ողբ ի մահն Սրապիոն վարդապետի : Սրապիոն վարդապետ Ուռհայեցի, որ 1603ին օծուած էր Էջմիածնի կաթողիկոս իբրեւ Գրիգոր ԺԳ. եւ 1606ին հրաժարելով՝ վերադարձած էր Ուռհա, վախճանեցաւ 1606, Ապրիլ 23ին Ամիթ : Մովսէս, որ առ ռոս Սրապիոնի կ'ուսանէր, ստացած էր վարդապետական իշխանութիւնը եւ կը սպասէր առնել նաեւ դաւաղանի իշխանութիւնը, մեծապէս ցնցուեցաւ վարդապետին մահուամբը : Իւր աղնիւ եւ երախտազէտ զգածմանց արտագեղումը ամփոփեց նա այդ Ողբին մէջ, որ մասամբ արձակ եւ մասամբ ոտանաւոր զբուսած է : Նա իբրեւ կաթնարոյծ մանուկ մը կ'ողբայ այս սեղ իւր կաթնատու մօր կորուստը. որպէս աչակերտ մը իւր ուսուցչին մահը. որպէս սրբ մը որ օտարութեան մէջ կողոպտուած է իւր հարազատ ծնողէն :

Այս զբուսածքը ամբողջութեամբ կը հրատարակեմ ստորեւ :

= Ձեռագիրք՝ Էջմիածին, 745, 179 բ—  
186 բ (Ժէ) : Երուսաղէմ, 1042, 48 ա—52 բ  
(1660<sup>o</sup>. վերջը պակաս<sup>1</sup>) : Շաւարշ վ. Մահաւ

<sup>1</sup> Արհապատիւ Մեսրոպ Նշանեան բարեհաճեցաւ համեմատել իմ օրինակս Երուսաղէմեան այս օրինակին հետ. տարբերութիւնները կը նշանակեմ B համառօտագրութեամբ :